Հաստատված է ԵՊՀ արհկոմիտեի «24» փտրվար 2023թ.

N 17 նիստի որոշմամբ

ԵՊՀ Արհկոմիտեի նախագահ Ա.Ռ. Ավետիսյան

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության արհբյուրոների անդամների, արհբյուրոների նախագահների և քարտուղարների ընտրությունների կազմակերպման և համաժողովի պատվիրակների ձևավորման

(նոր խմբագրությամբ)

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնակարգով (այսուհետ՝ կարգ) սահմանվում են ԵՊՀ արհեստակցական կազմակերպության արհբյուրոների անդամների, արհբյուրոների նախագահների և քարտուղարների ընտրությունների կազմակերպման և համաժողովի պատվիրակների ձևավորման, քվեարկությունների անցկացման, քվեարկությունների արդյունքների արձանագրման և հրապարակման, տվյալ պաշտոններից պաշտոնանկ արվելու, հրաժարականի, լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև վերոգրյալ անձանց ընտրությունների հետ կապված այլ հարցեր:

1.2. Արհբյուրոների անդամները (ներառյալ նախագահները և քարտուղարները) իրենց պաշտոնավարամն ամբողջ ընթացքում ի պաշտոնե հանդիսանում են համաժողովի պատվիրակներ:

1.3. Սույն կարգի 1.1 կետում նշված անձանց ընտրություններն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ բաց քվեարկությամբ:

1.4. Արհբյուրոյի նախագահը, անդամները և ընտրական հանձնաժողովը պատասխանատվություն են կրում սույն կարգի 1.1 կետում նշված անձանց ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման օրինականության համար:

1.5. Ընտրողներն ու ընտրվողները ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով:

1.6. Քվեարկողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է:

1.7. Ընտրությունները նախապատրաստվում և անցկացվում են թափանցիկ:

1.8. Ընտրական հանձնաժողովը ձևավորվում է արհկոմիտեի կողմից՝ ԵՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահի ներկայացմամբ:

1.9. Արհբյուրոների անդամները, արհբյուրոների նախագահներն ու քարտուղարներն ընտրվում են հինգ տարի ժամկետով:

1.10. Արհբյուրոյի քարտուղարն ընտրվում է արհբյուրոյի կողմից՝ նախագահի ներկայացմամբ:

1.11. Արհբյուրոյի անդրանիկ նիստը վարում է տարիքով ամենաավագը:

2. Արհբյուրոների ձևավորումը և անդամների ընտրությունները

2.1. Արհբյուրոները ձևավորվում են.

ա) ֆակուլտետների, ինստիտուտների և կրթական կենտրոնների կառուցվածքային ստորաբաժանումների արհբյուրոները ձևավորվում են ամբիոններից և գրասենյակներից մեկական ներկայացուցիչներով,

գ) տնտեսական մասի արհբյուրոն ձևավորվում է կառուցվածքային ստորաբաժանումի մեկական ներկայացուցիչով, ընդհանուր՝ ոչ պակաս երեք և ոչ ավել քան յոթ ներկայացուցիչ,

դ) գրադարանի արհբյուրոն ձևավորվում է յուրաքանչյուր բաժնից մեկական ներկայացուցիչով,

ե) ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի արհբյուրոն ձևավորվում է յուրաքանչյուր ֆակուլտետից, հեռակա բաժնից և տնօրինությունից մեկական ներկայացուցիչով,

զ) կենտրոնական վարչական մասի արհբյուրոն ձևավորվում է կառուցվածքային ստորաբաժանումներից մեկական ներկայացուցիչով, ընդհանուր ոչ պակաս յոթ և ոչ ավել քան տասնմեկ ներկայացուցիչ՝ ընդ որում արհբյուրոյի կազմում պետք է պարտադիր ներկայացված լինի ռեկտորի և յուրաքանչյուր պրոռեկտորի անմիջական ղեկավարության տակ գտնվող առնվազն մեկ կառուցվածքային ստորաբաժանման ներկայացուցիչ:

է) ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի, համահամալսարանական ամբիոնների և հաշվապահության արհբյուրոները ձևավորվում են յուրաքանչյուրից երեքական ներկայացուցչներով:

2.2. Արհբյուրոյի անդամներն ընտրվում են.

Սույն կարգով սահմանված ընթացակարգով արհբյուրոյի անդամներն ընտրվում են իրենց կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողների (կոլեկտիվի) կողմից:

2.2.1. Արհբյուրոյի անդամ կարող են ընտրվել ԵՊՀ գործատուի հետ աշխատանքային պայմանագրով հիմնական աշխատող հանդիսացող ԵՊՀ արհեստակցական կազմակերպության այն անդամները, ովքեր.

2.2.1.1. վերջին հինգ տարում սովորել կամ աշխատել են ԵՊՀ-ում,

2.2.1.2.ընտրվելու պահին և դրանից հետո չեն զբաղեցնում ԵՊՀ որևէ ստորաբաժանման ղեկվարի պաշտոն,

2.2.2.Ֆակուլտետների, ինստիտուտների և կրթական կենտրոնների ամբիոններից ընտրվող արհբյուրոյի անդամների պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված լինելը ցանկալի է:

2.3. Արհբյուրոների անդամների կազմի ընտրությունները սույն կարգով սահմանված ձևով անցկացվում են բաց քվեարկության միջոցով:

2.4. Ընտրություններից առաջ՝ ողջամիտ ժամկետում, սույն կարգի համաձայն, տվյալ ստորաբաժանման աշխատակազմը տեղեկացվում է ընտրության օրվա, ժամի, վայրի, ընթացակարգի և ընտրության հետ առնչություն ունեցող բոլոր հարցերի վերաբերյալ:

2.5. Ընտրությունների քվորումը համարվում է ապահովված, եթե ընտրություններին մասնակցել է աշխատակազմի աշխատողների կեսից ավելին:

3. Արհբյուրոների նախագահների ընտրություններ

3.1. Արհբյուրոյի անդամներն իրենց կազմից ընտրում են արհբյուրոյի նախագահ՝ պահպանելով սույն կարգի 3.2, 3.3, 3.4 կետերի պահանջները.

3.2. Նախագահի պաշտոնում ընտրվելու իրավունք ունեն առնվազն 5 տարի ԵՊՀ տվյալ կառուցվածքային ստորաբաժանման կազմում աշխատող և տվյալ պահին ԵՊՀ գործատուի հետ աշխատանքային պայմանագրով հիմնական աշխատող հանդիսացող ԵՊՀ արհեստակցական կազմակերպության անդամները:

3.3. Ֆակուլտետների, ինստիտուտների և կրթական կենտրոնների արհբյուրոյի նախագահի պաշտոնում ընտրվելու իրավունք ունեն ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմում ընդգրկված թեկնածուները:

3.4. ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի պաշտոններ զբաղեցնող աշխատողները ԵՊՀ արհեստակցական կազմակերպության արհբյուրոյի նախագահի պաշտոնում առաջադրվելու և ընտրվելու իրավունք չունեն:

3.5. Նախագահների ընտրությունները սույն կարգով սահմանված ձևով անցկացվում են բաց քվեարկության միջոցով:

3.6. Ընտրությունների քվորումը համարվում է ապահովված, եթե ընտրություններին մասնակցել է արհբյուրոների անդամների երկու երրորդը:

4. Բաց ընտրությունների կազմակերպումը, անցկացումը և արդյունքների հրապարակումը

4.1. Նիստը վարող անձը.

4.1.1. բացում, ընդհատում և փակում է ընտրության նիստը,

4.1.2. ձայն է տալիս ելույթ ունեցողներին,

4.1.3. կազմակերպում է քվեարկության անցկացումը և դրա արդյունքների հրապարակումը,

4.1.4. կարող է ընդմիջել ելույթները՝ նիստի և քվեարկության բնականոն ընթացքն ապահովելու համար:

4.2. Արհբյուրոյի անդամների ընտրության նիստի քարտուղարը կազմում է ընտրության արձանագրությունը համաձայն N 1 կամ N 2 հավելվածների:

4.2.1. Ընտրության արձանագրությունը ստորագրում են նիստը վարողը և նիստի քարտուղարը:

4.3. Արհբյուրոյի նախագահի և քարտուղարի ընտրությանը մասնակցում, նիստը վարում և նիստի արձանագրությունը կազմում է ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչը համաձայն N 3 կամ N 4 հավելվածների:

4.3.1. Ընտրության արձանագրությունը ստորագրում են ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչը և ֆակուլտետի կամ կառուցվածքային ստորաբաժանման արհբյուրոյի անդամներից մեկը՝ որպես նիստի քարտուղար:

4.4. Առաջադրված թեկնածուներից ընտրված են համարվում այն թեկնածուները, որոնք ստացել են քվեարկության մասնակիցների ամենաշատ թվով ձայները: Ձայների հավասարության դեպքում, հավասար ձայներ ստացած թեկնածուների միջև անցկացվում են կրկնակի ընտրություններ:

4.4.1. Կրկնակի ընտրությունների արդյունքում ձայների հավասարության դեպքում թեկնածուների միջև անցկացվում է վիճակահանություն:

4.4.1.1.Վիճակահանությունը կազմակերպելու և ընտրված թեկնածուին որոշելու համար, առավել կողմ ձայներ ստացած թեկնածուների թվին համապատասխան, պատրաստվում են իրարից չտարբերվող թերթիկներ, որոնցից մեկի վրա նշվում է «Ընտրվել է» բառերը, բոլոր թերթիկները ծալվում են այնպես, որ միմյանցից չտարբերվեն և տեղավորվում վիճակահանության արկղի մեջ: Թեկնածուներն ազգանունների, իսկ ազգանունները համընկնելու դեպքում՝ ըստ անունների (հայրանունների) այբբենական հերթականության, վիճակահանության արկղից հանում են մեկական թերթիկ:

4.4.1.2.Ընտրված է համարվում այն թեկնածուն, որին վիճակահանությամբ բաժին է ընկել «Ընտրվել է» բառերը պարունակող թերթիկը:

5. Արհբյուրոյի անդամի, արհբյուրոյի նախագահի և քարտուղարի պաշտոնանկ արվելու, հրաժարականի, լիազորությունների վաղաժամկետ դադարեցման կարգը

5.1. Արհբյուրոյի անդամը, արհբյուրոյի նախագահը և քարտուղարն իրենց պաշտոններից հրաժարվելու իրավունք ունեն պաշտոնավարման ընթացքի ցանկացած ժամանակահատվածում:

5.2. Արհբյուրոյի անդամը, արհբյուրոյի նախագահը և քարտուղարը կարող են պաշտոնանկ արվել երկու և ավելի անգամ իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար՝ սույն կարգի համաձայն տվյալ արհբյուրոյի որոշմամբ և ԵՊՀ արհկոմիտեի հաստատմամբ:

5.3. Արհբյուրոյի անդամի և քարտուղարի հրաժարականի դեպքում իր հրաժարականի մասին դիմումը վերջինս ներկայացնում է արհբյուրոյի նախագահին՝ պաշտոնից ազատվելու ամսաթվից առնվազն 15 օր առաջ:

5.4. Արհբյուրոյի նախագահի հրաժարականի դեպքում վերջինս պարտավոր է պաշտոնից ազատվելու ամսաթվից առնվազն 15 օր առաջ գրավոր ծանուցել ԵՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահին:

5.5. Արհբյուրոյի անդամի, արհբյուրոյի նախագահի և քարտուղարի լիազորությունները վաղաժամկետ դադարում են, երբ.

5.5.1. Նրանք դադարում են հանդիսանալ ԵՊՀ արհեստակցական կազմակերպության անդամ,

5.5.2. Գտնվում են 140 և ավելի օր արձակուրդի մեջ,

5.5.3. ԵՊՀ-ում ստանձնում են կառուցվածքային ստորոբաժանման ղեկավարի պաշտոն,

5.6. Արհբյուրոյի անդամի, արհբյուրոյի նախագահի և քարտուղարի աշխատանքից ազատվելու, հրաժարականի, իր պարտականությունները լիարժեք չկատարելու հետևանքով պաշտոնանկ արվելու դեպքում 15-օրյա ժամկետում հրավիրվում է աշխատողների կամ արհբյուրոյի նիստ և սույն կարգով սահմանված ձևով անցկացվում է նոր ընտրություն:

6. Արհբյուրոյի անդամի, արհբյուրոյի նախագահի և քարտուղարի ընտրությունների հետ կապված այլ հարցեր

6.1. Արհբյուրոյի անդամի, արհբյուրոյի նախագահի և քարտուղարի ընտրությունները համարվում են անվավեր, եթե ընտրություններն անցկացվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն կարգի պահանջների խախտմամբ:

6.2. Արհբյուրոյի անդամի, արհբյուրոյի քարտուղարի և արհբյուրոյի նախագահի ընտրական գործընթացն արտացոլող բոլոր փաստաթղթերը նիստի արձանագրության հետ միասին ներկայացվում է ԵՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահին:

6.3. Արհբյուրոյի անդամի, արհբյուրոյի քարտուղարի և արհբյուրոյի նախագահի ընտրական գործընթացում Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ԵՊՀ արհեստակցական կազմակերպության կանոնադրության և սույն կարգի խախտումներ հայտնաբերելու դեպքում ԵՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահը և ընտրական հանձնաժողովը պատճառաբանված հիմնավորմամբ արհբյուրոյի անդամի և/կամ արհբյուրոյի նախագահի և/կամ արհբյուրոյի քարտուղարի ընտրությունները ճանաչում են անվավեր և 10–օրյա ժամկետում նշանակում են նոր ընտրություններ կամ կրկնակի քվեարկություն:

7. Համաժողովի պատվիրակների ձևավորումը

7.1. ԵՊՀ արհեստակցական կազմակերպության համաժողովի պատվիրակների ձևավորման առանձին գործընթաց չի կազմակերպվում, ԵՊՀ ֆակուլտետներից, ինստիտուտներից, կենտրոններից և կառուցվածքային մյուս ստորաբաժանումներից ընտրված արհբյուրոների բոլոր անդամներն (ներառյալ նախագահները և քարտուղարները) ապահովում են իրենց ստորաբաժանումների կոլեկտիվների ներկայացուցչականությունը և այդ պաշտոնում ընտրվելու պահից մինչև իրենց պաշտոնավարման ավարտը համարվում են համաժողովի պատվիրակներ:

Հավելված N 1

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության

արհբյուրոների անդամների

ընտրությունների կազմակերպման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան « » 20 թ.

_____

(կառուցվածքային ստորաբաժանման, ֆակուլտետի, ամբիոնի, մասնաճյուղի անվանումը)

_____ աշխատողներից ներկա էին _____ -ը:

Քվեարկվել է (են) _____արհբյուրոյի

(կառուցվածքային ստորաբաժանման, ֆակուլտետի, ամբիոնի, մասնաճյուղի անվանումը)

անդամի _____ թեկնածություն(ներ)ը:

(թեկնածու(ներ)ի անունը, ազգանունը)

Քվեարկությանը մասնակցել են _____

_____ աշխատողներից _____-ը:

(կառուցվածքային ստորաբաժանման, ֆակուլտետի, ամբիոնի, մասնաճյուղի անվանումը)

Քվեարկության արդյունքներն են՝

_____

_____

(թեկնածու(ներ)ի անունը, ազգանունը, կողմ, դեմ)

Բաց քվեարկության արդյունքներով _____

(թեկնածու(ներ)ի անունը, ազգանունը)

_____ ընտրվել է (են) ԵՊՀ արհեստակցական կազմակերպության

_____արհբյուրոյի անդամի պաշտոնում:

(կառուցվածքային ստորաբաժանման, ֆակուլտետի, ամբիոնի, մասնաճյուղի անվանումը)

Նիստը վարող՝ _____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

Նիստի քարտուղար՝ _____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

Հավելված N 2

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության

արհբյուրոների անդամների

ընտրությունների կազմակերպման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան « » 20 թ.

_____

(կառուցվածքային ստորաբաժանման, ֆակուլտետի, ամբիոնի, մասնաճյուղի անվանումը)

_____ աշխատողներից ներկա էին _____ -ը:

Քվեարկվել է (են) _____արհբյուրոյի

(կառուցվածքային ստորաբաժանման, ֆակուլտետի, ամբիոնի, մասնաճյուղի անվանումը)

անդամի _____ թեկնածություն(ներ)ը:

(թեկնածու(ներ)ի անունը, ազգանունը)

Քվեարկությանը մասնակցել են _____

_____ աշխատողներից _____-ը:

(կառուցվածքային ստորաբաժանման, ֆակուլտետի, ամբիոնի, մասնաճյուղի անվանումը)

Քվեարկության արդյունքներն են՝

_____

_____

(թեկնածու(ներ)ի անունը, ազգանունը, կողմ, դեմ)

Բաց քվեարկության արդյունքներով _____

(թեկնածու(ներ)ի անունը, ազգանունը)

_____ չի (չեն) ընտրվել ԵՊՀ արհեստակցական կազմակերպության

_____ արհբյուրոյի անդամի պաշտոնում:

(կառուցվածքային ստորաբաժանման, ֆակուլտետի, ամբիոնի, մասնաճյուղի անվանումը)

Իսկ ներքոհիշյալ թեկնածուները՝

_____

_____

_____

մասնակցում են կրկնակի քվեարկությանը:

Նիստը վարող՝ _____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

Նիստի քարտուղար՝ _____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

Հավելված N 3

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության

արհբյուրոների նախագահների և քարտուղարների

ընտրությունների կազմակերպման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան « » 20 թ.

_____

(կառուցվածքային ստորաբաժանման, ֆակուլտետի, ամբիոնի, մասնաճյուղի անվանումը)

_____ արհբյուրոյի անդամներից ներկա էին ____ -ը:

Քվեարկվել է (են) _____ արհբյուրոյի նախագահի

(կառուցվածքային ստորաբաժանման, ֆակուլտետի, ամբիոնի, մասնաճյուղի անվանումը)

(քարտուղարի) _____ թեկնածություն(ներ)ը:

(թեկնածու(ներ)ի անունը, ազգանունը)

Քվեարկությանը մասնակցել են _____

_____ արհբյուրոյի անդամներից _____-ը:

(կառուցվածքային ստորաբաժանման, ֆակուլտետի, ամբիոնի, մասնաճյուղի անվանումը)

Քվեարկության արդյունքներն են՝

_____

_____

(թեկնածու(ներ)ի անունը, ազգանունը, կողմ, դեմ)

Բաց քվեարկության արդյունքներով _____

(թեկնածու(ներ)ի անունը, ազգանունը)

ընտրվել է ԵՊՀ արհեստակցական կազմակերպության _____

_____ արհբյուրոյի նախագահի (քարտուղարի) պաշտոնում:

(կառուցվածքային ստորաբաժանման, ֆակուլտետի, ամբիոնի, մասնաճյուղի անվանումը)

Ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչ՝ _____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

Նիստի քարտուղար՝ _____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

Հավելված N 4

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության

արհբյուրոների նախագահների և քարտուղարների

ընտրությունների կազմակերպման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան « » 20 թ.

_____

(կառուցվածքային ստորաբաժանման, ֆակուլտետի, ամբիոնի, մասնաճյուղի անվանումը)

_____ արհբյուրոյի անդամներից ներկա էին ____ -ը:

Քվեարկվել է (են) _____ արհբյուրոյի նախագահի

(կառուցվածքային ստորաբաժանման, ֆակուլտետի, ամբիոնի, մասնաճյուղի անվանումը)

(քարտուղարի) _____ թեկնածություն(ներ)ը:

(թեկնածու(ներ)ի անունը, ազգանունը)

Քվեարկությանը մասնակցել են _____

_____ արհբյուրոյի անդամներից _____-ը:

(կառուցվածքային ստորաբաժանման, ֆակուլտետի, ամբիոնի, մասնաճյուղի անվանումը)

Քվեարկության արդյունքներն են՝

_____

_____

(թեկնածու(ներ)ի անունը, ազգանունը, կողմ, դեմ)

Բաց քվեարկության արդյունքներով _____

(թեկնածու(ներ)ի անունը, ազգանունը)

_____ չի (չեն) ընտրվել ԵՊՀ արհեստակցական կազմակերպության

_____ արհբյուրոյի նախագահի (քարտուղարի) պաշտոնում:

(կառուցվածքային ստորաբաժանման, ֆակուլտետի, ամբիոնի, մասնաճյուղի անվանումը)

Իսկ ներքոհիշյալ թեկնածուները՝

_____

_____

_____

մասնակցում են կրկնակի քվեարկությանը:

Ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչ՝ _____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

Նիստի քարտուղար՝ _____

(անուն, ազգանուն, ստորագրություն)